Ծուշանիկ Կուրղինյան

Պատկեր

Տնակը սաստիկ փոքրիկ է ու հին,
Քամին ծերպերից սաղմոս է ասում,
Ապրում է այնտեղ խեղճ բանվորուհին
Եվ ծվեններից փալասներ հյուսում:

Չէ հնչվում այնտեղ քրքիջ կամ երգ-տաղ,
Չկա կենցաղի պետք ու հարմար իր .
Եվ տեսքից զրկված հատակն, առաստաղ
Խարխուլ պատերին մեծ ճիգով հպված,

Կասես սպասվող արարքից նանիր,
Պահում են գթով մենակ աղջկան՝
Ում բարվոք կյանքի էլ հույսեր չկան,
Վառարանն էլ պաղ, հացը՝ ողջ կերված:

Ում տարիքն արագ գալիս են գնում,
Դեմքին լիառատ գծում ցանց-կնճիռ,
Ով բախտի բերմամբ ուտում է, քնում,
Ում դատը չունի ո՛չ ելք, ո՛չ վճիռ:

Ով կայտառ, անհոգ մտավ գործարան,
Ժպիտը դեմքին, նախշուն երազով .
Ով ընկավ, ելավ . ում ուժով առան

Ու դեն նետեցին՝ կուրծք տաշող հազով:

Դուրսը ցուրտ է, բուք-տխուր երեկո .
Լքումն է գերել թշվառ աղջկան .
Իր անզոր զորքից վհատ ու դժգոհ՝
Դիտում է նրան սուրբը պապական .

Եվ հիշում՝ ինչպես գեղեցիկ մի օր
Իջավ փոթորիկ տնակում ցուրտ, հին,
Հավատը փախավ, թռավ թևավոր,
Մնաց մեն մենակ խեղճ բանվորուհին:

Կանթեղն այն օրից կախված է անձեթ,
Աղոթք, աղերսի նույնիսկ խոսք չկա .
Դաշտային ծաղկի մի փունջ հոտավետ
Նրա վաղանցուկ փառքին է վկա . . .

Ճոճում է լռիկ կեռը ափի մեջ,
Շարքերն են բազում, սակայն վարձը՝ քիչ .
Մի՞թե այս կյանքում նենգ ու սնամեջ
Մի վարդ չի պոկվի կույր բախտի կրծքից:

Մի՞թե չի գալու կինը իմաստուն
Մի նորոգ կյանքի սրբազան ուխտով . . .
Ժպտում է քնից ծեր, մռկան կատուն,
Շոյում աղջկան իր բրդոտ թաթով:

Դուրսը ցուրտ է, բուք . տխո՛ւր երեկո .
Ի՞նչ շահ լինել միշտ բախտից լոկ դժգոհ . . .

1911 թ. 31 հոկտեմբերի